ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ
МЭРИЯ г. АЛАВЕРДИ
REPUBLIC OF ARMENIA REGION OF LORI
MUNICIPALITY OF ALAVERDI

1702, Ալավերդի, Զ. Անդրանիկի 8Ա
1702, Алаверди, З. Андраника 8А
1702, Alaverdi, Z. Andraniki 8A
☎ (253) 2-41-00
Fax (253) 2-41-00
E-mail: alaverdi@alaverdi.am
URL: www.alaverdi.am

№ 1160

«01» 12 2011թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.Լ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ձեզ է ուղարկվում Ալավերդի համայնքի ավագանու 2011թ. թիվ 46-Ն և Ալավերդու քաղաքապետի 2011թ. թիվ 272-Ա, թիվ 273-Ա, թիվ 274-Ա, թիվ 275-Ա, թիվ 276-Ա, թիվ 277-Ա, թիվ 278-Ա, թիվ 279-Ա, թիվ 280-Ա, թիվ 281-Ա, թիվ 282-Ա, թիվ 283-Ա, թիվ 284-Ա որոշումները:

Առդիր՝ 15 էջ:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

Կատ.՝ Ա. Էվոյան
2-41-02

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

1702, Ալավերդի, Զ. Անդրանիկի 8Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 46-Ն
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30.11.2011թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Ալավերդի համայնքի 2011թ. բյուջեում
փոփոխություն կատարելու մասին
(Զեկ. Ա. ՎԱՐՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով և ելնելով ծախսերի կատարման անհրաժեշտությունից

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հիմք ընդունելով ՀՀ բնապահպանության և առողջապահության նախարարությունների համաձայնությունները, «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն բնապահպանական ծրագրով Ալավերդի համայնքի 2011թ. բյուջեի շրջակա միջավայրի պաշտպանության (այլ դասերին) չպատկանող բնագավառում համայնքի 300 հղի կանանց լրացուցիչ սննդի տրամադրման համար նախատեսված ծախսերից (բաժին 05, խումբ 6, դաս 1, ծրագիր 51, հ/հ 900262121107, հոդված 4267) փաստացի ծախսերի գծով առաջացած տնտեսված գումարները՝ 620.0 հազ. դրամ հատկացնել քաղաքի 6 նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող երեխաների համար լրացուցիչ սննդի ձեռքբերման ծախսերին (բաժին 05, խումբ 6, դաս 1, ծրագիր 51, հ/հ 900262121107, հոդված 4267):
2. Կրթության բնագավառում «Ալավերդու քաղաքային համայնքի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի համար 2011թ. բյուջեում նախատեսված ծախսերից փաստացի ծախսերի գծով առաջացած տնտեսված գումարներից (բաժին 09, խումբ 1, դաս 1, ծրագիր 51, հ/հ 900262121289, հոդված 4637) 500.0 հազ. դրամ հատկացնել ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ բնագավառի Ալավերդու քաղաքապետարանի աշխատավարձի համար նախատեսված ծախսերին (բաժին 01, խումբ 1, դաս 1, ծրագիր 51, հ/հ 900262161038, հոդված 4111), 270.0 հազ. դրամ հատկացնել մշակույթի բնագավառի այլ մշակութային կազմակերպությունների ամանորի միջոցառումների համար նախատեսված ծախսերին (բաժին 08, խումբ 2, դաս 4, ծրագիր 51, հ/հ 900262121123, հոդված 4269) և 230.0 հազ. դրամ հատկացնել «Ալավերդու քաղաքային համայնքի մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի համար նախատեսված ծախսերին (բաժին 08, խումբ 2, դաս 3, ծրագիր 51, հ/հ 900262229033, հոդված 4637):
3. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Լավագույն կայք» և «Լավագույն թատերական խումբ» մրցանակների համար Ալավերդի համայնքի 2011թ. բյուջեին նվիրաբերվել է 1000.0 հազ. դրամ, 2011թ. բյուջեի եկամտային ու ծախսային մասերն ավելացնել 1000.0 հազ. դրամով, այդ թվում՝ 2011թ. բյուջեի եկամտային մասում ներքին աղբյուրներից՝ կազմակերպությունների կողմից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող ոչ պաշտոնական դրամաշնորհներից եկամուտներն (հ/հ 900265121625) ավելացնել 1000.0 հազ. դրամով, որից

500.0 հազ. դրամը նախատեսել որպես վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացում (հ/հ 900265121534): Ծախսային մասում մշակույթի բնագավառում «Ալավերդու քաղաքային համայնքի մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի համար նախատեսված ծախսերն ավելացնել 500.0 հազ. դրամով (բաժին 08, խումբ 2, դաս 3, ծրագիր 51, հ/հ 900262229033, հոդված 4637), Ալավերդու քաղաքապետարանի վարչական սարքավորումների համար նախատեսված ծախսերն ավելացնել 500.0 հազ. դրամով (բաժին 01, խումբ 1, դաս 1, ծրագիր 51, հ/հ 900262161038, հոդված 5122):

Որոշումն ընդունվել է.

1. ԱԲԵԼՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
2. ԷՎՈՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ԹԱՆԴԻԼՅԱՆ ՀՐԱՉՅԱ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԻՐԶՈՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ
7. ՍԻՄՈՆՅԱՆ ԿԱՐԵՆ
8. ՎԱՐՈՍՅԱՆ ԿԱՄՈ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.Վ. ԷՎՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 284-Ա

29 նոյեմբերի 2011թ.

Փոստային հասցե տրամադրելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 38-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Ալավերդի քաղաքի Բաղրամյան թաղամասի թիվ 8 շենքի արևմտյան մասում գտնվող Լևոն Կիրակոսյանին պատկանող ավտոտնակին տրամադրել Բաղրամյան թաղամաս թիվ 8/32 Ա փոստային հասցե:

Հիմք՝ Լ. Կիրակոսյանի դիմումը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը:

Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ք. Ալավերդի
29.11.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 283-Ա

29 նոյեմբերի 2011թ.

Փոստային հասցեներ տրամադրելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 38-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ալավերդի քաղաքի երկաթուղային կայարանի շենքին տրամադրել Թումանյան փողոց թիվ 83 փոստային հասցե:
2. Ալավերդի քաղաքի «ԱՐԳԵ» սերվիսի հարավային մասում գտնվող քարշային ենթակայանի շենքին տրամադրել Երևանյան խճուղի թիվ 67 փոստային հասցե:
3. Ալավերդի քաղաքի Սանահին կայարան թաղամասի երկաթուղային կայարանից արևմուտք՝ Դեբեդ գետի և երկաթգծի միջև գտնվող հպակայանի շենքին տրամադրել Սահանի կայարան թաղամաս թիվ 100/1 փոստային հասցե:

Հիմք՝ «ՀԿԵ»-ի դիմումը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը:

Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ք. Ալավերդի
29.11.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 282-Ա

28 նոյեմբերի 2011թ.

«Քարափտրանս» ՍՊԸ-ին թիվ 005 երթուղու սպասարկումից (համալրված) ավտոբուսի հանելու թույլտվության մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 04.10.2007թ. N 1273 որոշումով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Թույլատրել «Քարափտրանս» ՍՊԸ-ին թիվ 005 երթուղու սպասարկումից հանել ԳԱԶ-322132 մակնիշի (դեղին հիմնագույնի պետհամարանիշը՝ 2882 Լ) համալրված միկրոավտոբուսը:

Հիմք՝ «Քարափտրանս» ՍՊԸ-ի գրությունը:

Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ք. Ալավերդի
28.11.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 281-Ա

24 նոյեմբերի 2011թ.

Փոստային հասցե տրամադրելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 38-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Ալավերդի քաղաքի Խուդյակով փողոցի թիվ 8 շենքի արևմտյան մասում գտնվող, Մարգարիտ Ավագյանին ժառանգության իրավունքով պատկանող ավտոտնակին տրամադրել Խուդյակով փողոց թիվ 8/4 Ա փոստային հասցե:

Հիմք՝ Քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը:

Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ք. Ալավերդի
24.11.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 280-Ա
23 նոյեմբերի 2011թ.

Կառուցապատման համար ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով հողամաս օտարելու և փոստային հասցե տրամադրելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 38-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման 6-րդ կետով, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով և հաշվի առնելով, որ ընդլայնվող հողամասը հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել հրապարակային սակարկությունների միջոցով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ալավերդի քաղաքի Թումանյան փողոցի թիվ 25 հասցեում գտնվող Վարդան Ալեքսանյանին սեփականության իրավունքով պատկանող 64.9 քմ մակերեսով ավտոտեխսպասարկման-լվացման կայանին կից ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով օտարել 30.0 քմ հողամաս, 24300 դրամ կադաստրային արժեքով՝ հասարակական օբյեկտ կառուցելու համար:
2. Վերը նշված ընդլայնվող հողամասին տրամադրել Թումանյան փողոց թիվ 25/1 փոստային հասցե:
3. Օտարվող հողամասը ընդգրկված չէ ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում:
4. Նշված իրավունքը ենթակա է պետական գրանցման:

Հիմք՝ Վ. Ալեքսանյանի դիմումը, ավտոտեխսպասարկման-լվացման կայանի սեփականության իրավունքի N 2828541 վկայականի պատճենը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը:

Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ք. Ալավերդի
23.11.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 279-Ա
23 նոյեմբերի 2011թ.

Ինքնակամ կառուցված նկուղով ավտոտնակի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը ճանաչելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 38-րդ հոդվածներով, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին և 2-րդ մասերով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. №731-Ն և 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ալավերդի քաղաքի Ջրավազան փողոց թիվ 2 շենքի հարավային մասում գտնվող՝ 1995թ. ինքնակամ կառուցված 51.43 քմ մակերեսով ավտոտնակի և 51.43 քմ մակերեսով նկուղի նկատմամբ՝ ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը:
2. Վերը նշված նկուղով ավտոտնակին տրամադրել Ջրավազան փողոց թիվ 2/10 Ա փոստային հասցե:
3. Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Գագիկ Սոխակյանին՝ 15-օրյա ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ալավերդու տարածքային ստորաբաժանում սույն որոշման 1-ին կետում նշված նկուղով ավտոտնակի նկատմամբ Ալավերդի համայնքի իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
4. Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Գագիկ Սոխակյանին՝ 20-օրյա ժամկետում ներկայացնել ինքնակամ կառույցի օրինականացման կամ քանդման մասին որոշման նախագիծ:

Հիմք՝ Ս. Հովակիմյանի դիմումը, ԱԳԿՊԿ Ալավերդու տարածքային ստորաբաժանման ղեկավարի 10.11.2011թ. թիվ ԴԹ-3159 գրությունը, «Թիվ 1 ԲՇՏ» ՓԲԸ-ի 15.11.2011թ. թիվ 0-50/03 տեղեկանքը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը:

Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ք. Ալավերդի
23.11.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 278-Ա

22 նոյեմբերի 2011թ.

Համայնքային սեփականություն ճանաչված ավտոտնակի բաժնային մասը և նրա զբաղեցրած հողամասը օտարելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 38-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. № 912-Ն որոշման 34-րդ, 47-րդ կետերով և հաշվի առնելով, որ Արփենիկ Առաքելյանը ընդունել է ավտոտնակի բաժնային մասը և նրա զբաղեցրած հողամասը ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը և վճարել է օրինականացման համար սահմանված վճարները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ալավերդի քաղաքի Բաղրամյան թաղամաս թիվ 5/19 Ա հասցեում գտնվող քաղաքապետի 03.02.2011թ. թիվ 27-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված 17.1 քմ մակերեսով ավտոտնակի բաժնային մասը՝ 18810 (տասնութ հազար ութ հարյուր տասը) դրամ, և նրա զբաղեցրած 17.1 քմ հողամասը՝ 13851 (տասներեք հազար ութ հարյուր հիսունմեկ) դրամ արժեքով ուղղակի վաճառքով օտարել Արփենիկ Առաքելյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ավտոտնակի բաժնային մասի և հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

Հիմք՝ Քաղաքապետի 03.02.2011թ. թիվ 27-Ա և 19.10.2011թ. թիվ 245-Ա որոշումները, վճարման անդորրագրերը, ժառանգության իրավունքի վկայագիրը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը:

Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ք. Ալավերդի
22.11.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 277-Ա
22 նոյեմբերի 2011թ.

Ինքնակամ կառուցված ավտոտնակի նկատմամբ
Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը
ճանաչելու և փոստային հասցե տրամադրելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 38-րդ հոդվածներով, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. № 731-Ն և 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ալավերդի քաղաքի Սայաթ-Նովա փողոցի թիվ 18 շենքի հյուսիս-արևմտյան մասում հենապատի մեջ 1990թ. ինքնակամ կառուցված 29.7 քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը:
2. Վերը նշված ավտոտնակին տրամադրել Սայաթ-Նովա թիվ 18/16 Ա փոստային հասցե:
3. Հաշվի առնելով, որ ավտոտնակը կառուցվել է ճանապարհի տակ, հենապատի մեջ, ուստի ավտոտնակին հողամաս չի կարող հատկացվել:
4. Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ Վալերի Մինասյանին՝ 15-օրյա ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ալավերդու տարածքային ստորաբաժանում սույն որոշման 1-ին կետում նշված ավտոտնակի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
5. Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Գագիկ Սոխակյանին՝ 20-օրյա ժամկետում ներկայացնել ինքնակամ կառույցի օրինականացման կամ քանդման մասին որոշման նախագիծ:

Հիմք՝ Ռ. Պապոյանի դիմումը, «Թիվ 1 ԲՇՏ» ՓԲԸ-ի 14.02.2011թ. թիվ 0-50/02 տեղեկանքը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը:

Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ք. Ալավերդի
22.11.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 276-Ա

22 նոյեմբերի 2011թ.

Քաղաքապետի 25.05.2011թ. թիվ 111-Ա
որոշման մեջ լրացում կատարելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 38-րդ հոդվածներով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Ալավերդու քաղաքապետի 25.05.2011թ. թիվ 111-Ա որոշման 1-ի կետից հետո ավելացնել 1.1 կետ հետևյալ խմբագրությամբ.

1.1 Ավտոտնակի զբաղեցրած 31.85 քմ հողամասը ենթակա է գրանցման թիվ 2 դպրոցի և Ս. Տիտանյանի նկատմամբ բաժնային մասով (15.92 քմ մակերեսով)՝ սեփականության իրավունքով:

Հիմք՝ Քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը:

Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ք. Ալավերդի
22.11.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 275-Ա

17 նոյեմբերի 2011թ.

Հոգաբարձու նշանակելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 33-րդ, 35-րդ հոդվածների դրույթներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ալավերդի քաղաքի Զորավար Անդրանիկի 36/16 բնակարանի բնակիչ Անահիտ Հարությունի Մելիքյանին նշանակել անչափահաս Արթուր Սուրիկի Ծատինյանի (ծնված՝ 25.12.1996թ.) հոգաբարձու:
2. Հոգաբարձու Ա. Հ. Մելիքյանին իրավունքով վերապահել ստանալու և տնօրինելու անչափահասին հասանելիք թոշակները, նպաստները և դրամական այլ մուտքերը՝ անչափահասին պահելու համար:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Հիմք՝ Քաղաքապետարանի “Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի” 17.11.2011թ նիստի որոշումը:

Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ք. Ալավերդի
17.11.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 274-Ա

17 նոյեմբերի 2011թ.

Համայնքային սեփականություն
ճանաչված ավտոտնակը
օրինականացնելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 38-րդ հոդվածներով, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի 5-րդ կետով,ՀՀ կառավարության 18.05.2006թ N 912-Ն որոշման 33-րդ կետով և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված ավտոտնակը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ և պահպանում է քաղաքաշինական նորմերը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թիվ 3/9-18 Ա հասցեում գտնվող, քաղաքապետի 13.10.2011թ թիվ 238-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված 30,99 քմ մակերեսով ավտոտնակը՝ սպասարկման համար զբաղեցրած 72.64 քմ հողամասով:
2. Ավտոտնակի զբաղեցրած հողամասը ընդգրկված չէ ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում:
3. Հանձնարարել քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Գագիկ Սոխակյանին՝ ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Ֆելիքս Դավթյանին, օրինականացված ավտոտնակը և զբաղեցրած հողամասը ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:
4. Որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Գագիկ Սոխակյանի վրա:

Հիմք՝ Քաղաքապետի 13.10.2011թ թիվ 238-Ա որոշումը, համայնքային սեփականության իրավունքի N 2853583 վկայականը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը:

Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ք. Ալավերդի
17.11.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 273-Ա

17 նոյեմբերի 2011թ.

Փոստային հասցե տրամադրելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 38-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29.12.2005թ թիվ 2387-Ն որոշումով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասում 2/31 շենքի արևմտյան մասում գտնվող, Հովհաննես Սուքիասյանի անվամբ գրանցված ավտոտնակին տրամադրել Սանահին Սարահարթ թիվ 2/31 թիվ 24Ա փոստային հասցե:

Հիմք՝ Քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը:

Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ք. Ալավերդի
17.11.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 272-Ա

17 նոյեմբերի 2011թ.

«ՀՀ ԼՄԱՔ – ՊԸ ԾՁԲ - 11/22» ծածկագրով
պարզեցված ընթացակարգի գնահատող
հանձնաժողովի լուծարման մասին

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգով և հիմք ընդունելով «ՀՀ ԼՄԱՔ – ՊԸ ԾՁԲ - 11/22» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումով հաստատված հաշվետվությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Լուծարել «ՀՀ ԼՄԱՔ–ՊԸ ԾՁԲ-11/22» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովը:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքապետարանի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետ Արթուր Հովհաննիսյան վրա:

Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ք. Ալավերդի
17.11.2011թ.